ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2024

ՀՈՒՆՎԱՐ - ՓԵՏՐՎԱՐ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 2

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1 **Բնութագրումով որոշել հատկանիշը:**

Բնական և հասարակական ցանկացած երևույթ կամ օբյեկտ Երկրի մակերևույթի վրա ունի իր որոշակի հասցեն: Դրա փոփոխությունը կարող է փոխել նաև երևույթի կամ օբյեկտի բնույթը: Աշխարհագրական մտածողության հիմնական հատկանիշներից որի՞ն է վերաբերում այս բնութագրումը.

1) համընդհանրությանը
2) համալիրությանը
3) տարածականությանը
4) կոնկրետությանը

2 **Հյուսիսային կիսագնդում կեսօրին առարկաների ստվերները դեպի հորիզոնի ո՞ր կողմն են ուղղված:**

1) հյուսիսային
2) արևելյան
3) հարավային
4) արևմտյան

3 **Ո՞րն է ամենափոքր մասշտաբը:**

1) 1:4200000
2) 1:4200
3) 1:42000
4) 1:420000

4 **Նկարում ի՞նչ քարտեզագրական պրոյեկցիա է պատկերված:**

1) կոնային
2) հասարակածային
3) ազիմուտային
4) գլանային

5 **Երկրի մակերևույթով անցնող և բևեռներն իրար միացնող երևակայական կիսաշրջագիծը կոչվում է.**

1) զուգահեռական
2) ուղեծիր
3) միջօրեական
4) առանցք

6 **Կորիոլիսի ուժի հետևանքով Երկրի վրա հորիզոնական ուղղությամբ շարժվող մարմինները հյուսիսային կիսագնդում իրենց սկզբնական ուղղությունից շեղվում են.**

1) ներքև
2) աջ
3) ձախ
4) վերև

7 **Գոնդվանայի մասնատումից առաջացած պլատֆորմ է.**

1) Ռուսականը
2) Հյուսիսամերիկյանը
3) Սիբիրականը
4) Հարավամերիկյանը

8 **Ո՞ր օվկիանոսի ափերին են առավել ցայտուն դիտվում երկրաշարժերն ու հրաբխային ժայթքումները։**

1) Հյուսիսային սառուցյալ
2) Խաղաղ
3) Հնդկական
4) Ատլանտյան

9 **Ո՞ր պնդումն է ճիշտ։**

1) Բևեռներում Արեգակի ճառագայթները հիմնականում ընկնում են մեծ անկյան տակ։
2) Հասարակածում Արեգակի ճառագայթները հիմնականում ընկնում են փոքր անկյան տակ։
3) Արեգակից ստացվող ջերմության քանակը կախված է վայրի աշխարհագրական լայնությունից և բացարձակ բարձրությունից։
4) Ջերմային բարեխառն գոտիներն ընկած են արևադարձերի միջև։

10 **Կլիմայական քարտեզի վրա նույն պահին հավասար ճնշում ունեցող կետերը միացնող գիծը կոչվում է.**

1) իզոհիպս
2) իզոբաթ
3) իզոթերմ
4) իզոբար

11 **Ո՞ր ծովերն ունեն Համաշխարհային օվկիանոսի միջին աղիությունից անհամեմատ փոքր աղիություն:**

1) Արաբական և Կորալյան
2) Կարայի և Բարենցի
3) Չուկոտյան և Բերինգի
4) Բալթիկ և Ազովի

12 **«Լիճ — աշխարհամաս» զույգերից ո՞րն է ճիշտ:**

1) Արալյան — Ասիա
2) Ուրմիա — Եվրոպա
3) Օնեգա — Աֆրիկա
4) Վերին — Ավստրալիա

13 **Շյուղախոտը և փետրախոտը ո՞ր զոնային են բնորոշ:**

1) տայգային
2) անապատին
3) տափաստանին
4) սավաննային

14 **Ի՞նչն է բնորոշ տայգային:**

1) հողի բազմամյա սառածությունը
2) պոդզոլային հողերի գերակշռությունը
3) լայնատերև ծառերի առատությունը
4) անբավարար խոնավությունը

15 **Եքիդնան և բադակտուցը ապրում են.**

1) Եվրասիայում
2) Հարավային Ամերիկայում
3) Ավստրալիայում
4) Հյուսիսային Ամերիկայում

16 **Ո՞ր օդային զանգվածներն են գերիշխում մերձարևադարձային կլիմայական գոտում:**

1) բարեխառն և արկտիկական
2) հասարակածային և արևադարձային
3) բարեխառն և անտարկտիկական
4) արևադարձային և բարեխառն

17 **Կոզի – պետություն է.**

1) Իրանը
2) Իսլանդիան
3) Իտալիան
4) Իսպանիան

18 **Էքսկլավ է.**

1) Մոնակոն
2) Լեսոտոն
3) Ալյասկան
4) Մալթան

19 **Բնակչության թվով գերխոշոր պետություն չէ.**

1) ՀԱՀ-ը
2) Հնդկաստանը
3) ԱՄՆ-ը
4) Ռուսաստանը

20 **Բնութագրումով որոշել գետը:**

Հարթավայրային գետ է: Այն Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի ամենամեծ ջրհավաք ավազան ունեցող գետն է: Ո՞ր գետն է.

1) Օբ
2) Պեչորա
3) Լենա
4) Ենիսեյ

21 **Եվրասիայի բարեխառն կլիմայական գոտու վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:**

1) Ցամաքային կլիմայի մարզում կլիմայի ցամաքայնությունն արևմուտքից արևելք նվազում է:
2) Ամենափոքր տարածքը զբաղեցնում է բարեխառն ցամաքային կլիմայի մարզը:
3) Ամենամեծ տարածքը զբաղեցնում է բարեխառն մուսսոնային կլիմայի մարզը:
4) Ծովային կլիմայի մարզը բնութագրվում է մեղմ ձմեռով, զով ամառով:

22 **Ո՞ր ծովածոցը Բալթիկ ծովի մաս չէ:**

1) Բոտնիկական
2) Ռիգայի
3) Բիսկայան
4) Ֆիննական

23 **Օվկիանոսային ո՞ր հոսանքն է անցնում Աֆրիկայի հարավարևելյան ափերի մոտով:**

1) Բենգելյան
2) Սոմալիական
3) Մոզամբիկի
4) Կանարյան

24 **Ո՞ր շարքում է սննդային շղթան *սխալ։***

1) ընձախոտ — քարայծ — հեպարդ
2) կարիճ — ճագարամուկ — կոբրա
3) ցեցե — այծքաղ — առյուծ
4) մուկ — կոբրա — արծիվ

25 **Ո՞ր լիճն է գտնվում ամերիկյան Մեծ լճերի կազմում։**

1) Օնտարիո
2) Մեծ արջի
3) Աթաբասկա
4) Մեծ աղի

26 **Հյուսիսային Ամերիկայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ։**

1) Հյուսիսային ափերը շատ թույլ են կտրտված, և կղզիները քիչ են։
2) Մեծությամբ չորրորդն է՝ Հարավային Ամերիկայից հետո։
3) Ամենաբարձր և ամենացածր կետերը մայրցամաքի արևմուտքում են։
4) Մեքսիկական ծոցը գտնվում է մայրցամաքի արևելքում։

27 **Բնութագրումով որոշել նեղուցը։**

Այդ նեղուցը միացնում է 2 օվկիանոս և անջատում է Հրո երկիր կղզին մայրցամաքից։ Ո՞ր նեղուցն է։

1) Մագելանի
2) Բերինգի
3) Դարդանելի
4) Թորեսի

28 **Ավստրալիայում ոչ մշտահոս գետերը կամ չոր գետահունները կոչվում են.**

1) ուեդներ
2) վադիներ
3) սելավներ
4) քրիկներ

29 **Ո՞ր կենդանին Անտարկտիդայում և հարակից ջրային տարածքներում *չի* ապրում։**

1) կապույտ կետը
2) պինգվինը
3) սպիտակ արջը
4) ծովափիղը

30 **Ո՞ր երկրներում է բնակչության առավել համաչափ տեղաբաշխում նկատվում։**

1) Բրազիլիա և Եգիպտոս
2) Ավստրալիա և Չինաստան
3) Մոլդովա և Գերմանիա
4) Ռուսաստան և Կանադա

31 **Ո՞ր պնդումն է *սխալ։***

1) Բնակչության թվի աճի տեմպերը բարձր են վերարտադրության երկրորդ տիպի երկրներում։
2) Բնակչության ցածր բնական աճը բնորոշ է զարգացած երկրներին։
3) Բնակչության մահացության ամենաբարձր ցուցանիշները բնորոշ են աֆրիկյան երկրներին։
4) Բնակչության վերարտադրության առաջին տիպին են պատկանում Ասիայի և Աֆրիկայի զարգացող երկրները։

32 **«Ժողովուրդ — ռասա» զույգերից ընտրել *սխալը։***

1) սենեգալցիներ — նեգրոիդ
2) պարսիկներ — եվրոպեոիդ
3) արաբներ — նեգրոիդ
4) շվեդներ — եվրոպեոիդ

33 **Տարբեր ջերմատվությամբ օժտված ռեսուրսների տեսակները միմյանց հետ համեմատելու նպատակով պայմանականորեն ընդունված համարժեքային միավորն անվանում են.**

1) պայմանական վառելիք
2) պայմանական նշան
3) պայմանական գիծ
4) պայմանական միավոր

34 **Ո՞ր պնդումն է ճիշտ։**

1) Քիմիական արդյունաբերությունն ունի խիստ սահմանափակ հումքային բազա։
2) Գիտատար և նորագույն տեխնոլոգիաներով հագեցած արտադրությունները կենտրոնացած են զարգացող երկրներում։
3) Գյուղատնտեսական մեքենաշինության ձեռնարկությունները տեղաբաշխված են զարգացած հողագործության շրջաններում։
4) Ավտոմեքենաշինության տեղաբաշխման վրա մեծ է հումքային ու վառելիքաէներգետիկ ռեսուրսների ազդեցությունը։

35 **Աշխատողների թվով համաշխարհային արդյունաբերության առաջատար ճյուղն է.**

1) սննդի արդյունաբերությունը
2) մեքենաշինությունը
3) թեթև արդյունաբերությունը
4) մետաղաձուլությունը

36 **Արևմտյան Եվրոպայի պետություններից չէ.**

1) Շվեյցարիան
2) Ֆրանսիան
3) Գերմանիան
4) Ֆինլանդիան

37 **Հարավային Եվրոպայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Արևադարձային կլիմայական գոտու սահմաններում է:
2) Ընդգրկում է Պիրենեյան, Ապենինյան և Փոքր Ասիա թերակղզիների երկրները:
3) Տարածաշրջանում հաճախակի են երկրաշարժերը, կան գործող հրաբուխներ:
4) Հարուստ է վառելիքաէներգետիկ ռեսուրսներով:

38 **Ընտրել «պետություն-մայրաքաղաք» համապատասխանությունների ճիշտ շարքը:**

1. Լեհաստան	ա. Բուխարեստ
2. Հունգարիա	բ. Պրահա
3. Ռումինիա	գ. Վարշավա
4. Չեխիա	դ. Բուդապեշտ

1) 1-ա, 2-գ, 3-բ, 4-դ
2) 1-բ, 2-ա, 3-դ, 4-գ
3) 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ
4) 1-բ, 2-ա, 3-գ, 4-դ

39 **Ո՞ր պետությունն է գտնվում երկու աշխարհամասում:**

1) Իրանը
2) Թուրքիան
3) Իրաքը
4) Սիրիան



քարտեզ 1

40 **Քարտեզ 1-ում ո՞ր թերակղզին է պատկերված Բ տառով:**

1) Ֆլորիդա
2) Կալիֆոռնիական
3) Լաբրադորյան
4) Ալյասկա

41 **Քարտեզ 1-ում ո՞ր ծոցն է պատկերված Է տառով:**

1) Գվինեական
2) Մեքսիկական
3) Կալիֆոռնիական
4) Ֆիննական

42 **«Լճեր — գոգավորության ծագում» զույգերից ընտրել *սխալը:***

1) Ուրմիա, Ակնա — սողանքապատվարային
2) Փարվանա, Խանչալի — հրաբխային
3) Քարի, Սև — սառցադաշտային
4) Սևան, Վանա — տեկտոնահրաբխային

43 **Ո՞ր պնդումն է *սխալ:***

1) Գեղամա և Վարդենիսի լեռներն ունեն հրաբխային ծագում:
2) Արեգունու և Սևանի լեռները ՀՀ հարավային ծալքաբեկորավոր լեռների և միջլեռնային գոգավորությունների մարզում են:
3) Փամբակի և Բազումի լեռները ՀՀ հյուսիսային ծալքաբեկորավոր լեռների և միջլեռնային գոգավորությունների մարզում են:
4) Բարգուշատի և Վայքի լեռներն ունեն ծալքաբեկորային ծագում:

44 **Ո՞ր մարզն է առավել խտաբնակ:**

1) Կոտայքի
2) Լոռու
3) Արմավիրի
4) Արարատի

45 **ՀՀ-ում տղամարդկանց և կանանց թվաքանակի հարաբերակցության վրա *չի* ազդել.**

1) արցախյան ազատամարտը
2) արտագնա աշխատանքի մեկնելու հանգամանքը
3) տղամարդկանց շրջանում բարձր մահացությունը
4) բնակչության կրթական մակարդակը

46 **ՀՀ ո՞ր քաղաքն է տուֆի արտահանման խոշոր կենտրոն:**

1) Բերդ
2) Ապարան
3) Արթիկ
4) Սպիտակ

47 **Ո՞ր քաղաքի մոտ կա պղնձամոլիբդենային հանքավայր.**

1) Արտաշատ
2) Աբովյան
3) Աշտարակ
4) Ագարակ

քարտեզ 2

48 **Քարտեզ 2-ում ո՞ր մարզն է նշված Զ տառով:**

1) Գեղարքունիք
2) Կոտայք
3) Արագածոտն
4) Շիրակ

49 **Քարտեզ 2-ում ո՞ր հանքային աղբյուրն է նշված Գ տառով:**

1) Բջնիի
2) Դիլիջանի
3) Լիճքի
4) Հանքավանի

50 **Համախառն արտադրանքի ծավալով ԼՂՀ արդյունաբերության առաջատար ճյուղն էր.**

1) մեքենաշինությունը
2) հանքագործական արդյունաբերությունը
3) թեթև արդյունաբերությունը
4) փայտամշակման արդյունաբերությունը

51 **Ո՞ր մայրցամաքում է անապի գոտին:**

1) Եվրասիա
2) Հյուսիսային Ամերիկա
3) Ավստրալիա
4) Հարավային Ամերիկա

52 **Տրված բնական ռեսուրսներից որո՞վ են լեռնային տարածքները համեմատաբար աղքատ:**

1) վառելիքային
2) ջրաէներգետիկ
3) մետաղային
4) ռեկրեացիոն

53 **Շրջակա միջավայրի վրա առավել շատ բացասական ազդեցություն է թողնում.**

1) պղնձաձուլությունը
2) կարի արտադրությունը
3) սարքաշինությունը
4) կոնյակի արտադրությունը

54 **Ի՞նչ դեր ունի մթնոլորտում տարածվող օզոնի շերտը.**

1) Երկրի վրա թթվածնի ստեղծման միակ աղբյուրն է
2) կլանում է Արեգակի ուլտրամանուշակագույն և տիեզերական ճառագայթները
3) ապահովում է ներքնոլորտում օդային զանգվածների շրջանառությունը
4) խոնավ եղանակներին առաջացնում է լուսաքիմիական սմոգ

55 **Ջրավազաններն աղտոտող արհեստական նյութերից են.**

1) քիմիական պարարատանյութերը
2) գետերի ջրերում լուծված հանքային աղերը
3) գեյզերների ջրերում լուծված հանքային աղերը
4) հարթավայրային գետերով տեղափոխվող անտառանյութը

56 **Գրել նավարկելի ջրանցքների համարները:**

1) Կուկի
2) Ֆլորիդայի
3) Բերինգի
4) Պանամայի
5) Թաթարական
6) Քիլի
7) Զոնդյան
8) Սուեզի

57 **Գրել այն երկրների համարները, որոնք հանրապետություններ են:**

1) Լատվիա
2) Ֆինլանդիա
3) Շվեդիա
4) Դանիա
5) Իսպանիա
6) Ճապոնիա
7) Մեծ Բրիտանիա
8) Եգիպտոս

58 **Գրել այն ժողովուրդների համարները, որոնք դավանանքով ուղղափառ են:**

1) շվեդներ
2) բելառուսներ
3) սերբեր
4) ֆրանսիացիներ
5) բրազիլացիներ
6) ավստրալացիներ
7) իսպանացիներ
8) չեխեր

59 **Գրել այն երկրների համարները, որոնք ուրբանիզացման առավել բարձր մակարդակ ունեն:**

1) Չինաստան
2) Աֆղանստան
3) Արգենտինա
4) Հնդկաստան
5) Բելգիա
6) Ճապոնիա
7) Մոզամբիկ
8) Բանգլադեշ

60 **Գրել Արաքսի ավազանին պատկանող վտակների համարները:**

1) Զորագետ
2) Մակու
3) Ճորոխ
4) Գետիկ
5) Ողջի
6) Մեծամոր
7) Հրազդան
8) Խաչենագետ

61 Գրել ՀՀ այն էլեկտրակայանների համարները, որոնք ջրային *չեն:*

1) Արզնիի
2) Վանաձորի
3) Քանաքեռի
4) Մեծամորի
5) Սևանի
6) Զորագետի
7) Տաթևի
8) Շամբի

62 Տրված պետությունները դասավորել բրնձի համախառն բերքի աճման կարգով:

1) Չինաստան
2) Ինդոնեզիա
3) Հնդկաստան
4) Բանգլադեշ

63 ՀՀ տրված ջրամբարների համարները դասավորել դրանց ջրի ծավալների աճման կարգով:

1) Սպանդարյանի 2) Ախուրյանի 3) Կեչուտի

64 Երկու քաղաքներ հասարակածի վրա են: Դրանցից մեկը արլ. ե. 40°-ի վրա է, իսկ մյուսը՝ արմ. ե. 70°-ի: Որոշել քաղաքների միջև եղած հեռավորությունը կիլոմետրով:

(65-66) Լեռան ստորոտին օդի ջերմաստիճանը 13˚C է, գագաթին՝ 1˚C: Ստորոտը ծովի մակարդակից 1400 մ բարձրության վրա է (հաշվարկը կատարել 6˚-ով).

65	Որոշել լեռան բացարձակ բարձրությունը:

66	Որոշել լեռան հարաբերական բարձրությունը:

67	Որքա՞ն է երկրի բնակչության բացարձակ բնական աճը, եթե այդ երկրի բնակչության թիվը 2,5 մլն է, բնական աճի գործակիցը՝ 10 ‰:

68 **Երկրի գետային տրանսպորտի բեռնաշրջանառությունը 9 մլն տ·կմ է, իսկ բեռների փոխադրման միջին հեռավորությունը՝ 150 կմ։ Որքա՞ն է տարեկան փոխադրվող բեռների ծավալը։**

69 **Չինաստանի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ։**

1) Աշխարհի առաջատար երկրներից է պարարտանյութերի ու ցեմենտի արտադրությամբ։
2) Հարուստ է ածխի և երկաթաքարի պաշարներով։
3) Սև մետաղաձուլությունը զարգանում է բացառապես ներկրվող հումքի հիման վրա։
4) Մետաղաձուլական շրջանները հիմնականում տեղաբաշխված են երկրի արևմտյան շրջաններում։
5) Արդյունաբերության առաջատար ճյուղերից է մեքենաշինությունը։
6) Թեթև արդյունաբերության գլխավոր կենտրոնը Շանհայն է։

70 **ՀՀ Արագածոտնի մարզի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ։**

1) Ռոռգովի հողագործության համար հիմք են հանդիսացել Թալինի և Արզնի-Շամիրամի մայր ջրանցքները։
2) Աչքի է ընկնում գինու, կոնյակի, կաթի և կաթնամթերքի արտադրությամբ։
3) Հողաբարելավման կարևոր տեսակներից է ոռոգումը և քարամաքրումը։
4) Միջին և բարձր գոտիներում առավել զարգացած են խաղողագործությունն ու պտղաբուծությունը։
5) Տնտեսության զարգացման գործում մեծ դեր է խաղում արևմտյան մասով անցնող Երևան — Թբիլիսի երկաթուղին։
6) Անասնապահության ենթաճյուղերից առավել զարգացած են խոզաբուծությունն ու թռչնաբուծությունը։